

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

### **Օ Ր Ե Ն Ք Ի Ն Ա Ս Ա Գ Ծ Ի Կ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Լ**

#### **Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Դ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն**

#### **Օ Ր Ե Ն Ք Ը**

#### **Թ Կ Ա Յ Ի Ն Ֆ Ի Ն Ա Ն Ս Ա Կ Ա Ն Ա Կ Տ Ի Կ Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն**

#### **Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից թվային ֆինանսական ակտիվների ստեղծման (մայնինգ), պահպանման և շրջանառության հետ կապված իրավահարաբերությունները:

#### **Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝
  - 1) թվային ֆինանսական ակտիվ՝ էլեկտրոնային տեսքով գույք, որը ստեղծվում է կրիպտոգրաֆիկայի միջոցով: Սույն գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վավերացվում է թվային գործարքների ռեեստրում համապատասխան թվային վավերապայմանների համապատասխանության ստուգման միջոցով,
  - 2) թվային ֆինանսական ակտիվի մայնինգ՝ գործողություններ, որոնց արդյունքում կրիպտոարժույթի ձեռքբերման գործարքն ստուգվում եւ գրանցվում է բլոկչեյնում կամ թողարկվում է նոր թվային ֆինանսական ակտիվ,
  - 3) թվային գործարքների ռեեստր (բլոկչեյն)՝ որոշակի ժամանակահատվածում թվային գործարքների ստեղծման և կառավարման համակարգված բազա,
  - 4) կրիպտոակտիվ՝ թվային ֆինանսական ակտիվի տեսակ, որը ստեղծվում և հաշվառվում է թվային գործարքների ռեեստրում,
  - 5) թվային դրամապանակ՝ ծրագրային տեխնիկական միջոց, որը թույլ է տալիս պահպանել թվային գրանցումների մասին տեղեկատվությունը և որի միջոցով ապահովվում է թվային գործարքների ռեեստրի հասանելիությունը:

#### **Հոդված 3. Թվային ֆինանսական ակտիվների ստեղծումն ու պահպանումը**

1. Սույն օրենքի իմաստով թվային ֆինանսական ակտիվի ստեղծում է համարվում կրիպտոակտիվի մայնինգը:

2. Կրիպտոակտիվների ստեղծմամբ և պահպանմամբ իրավասու են զբաղվելու իրավաբանական և ֆիզիկական անձինք, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը:

3. Ֆիզիկական անձանց կողմից իրականացվող մայնինգը, կրիպտոակտիվների պահպանումը և օտարումը չի համարվում ձեռնարկատիրական գործունեություն, եթե այն իրականացվում է ինքնուրույն առանց աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի հիմքով այլ ֆիզիկական անձի կամ անձանց ներգրավման:

4. Ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի կողմից թվային ֆինանսական ակտիվների ստեղծման և պահպանման գործունեության հետ կապված հարկային պարտավորությունների առաջագումը որոշվում է օրենքով սահմանված կարգով:

#### ***Հոդված 4. Թվային ֆինանսական ակտիվների շրջանառության առանձնահատկությունները***

1. Թվային ֆինանսական ակտիվների սեփականատերերը իրավասու են իրականացնել կրիպտոակտիվների դրամով կամ այլ արժույթով փոխանակման գործարքներ: Հայաստանի Հանրապետության տարածքում թվային ֆինանսական ակտիվների փոխանակման այլ գործարքների գանկը, ինչպես նաև այդ գործարքների կատարման կարգն ու պայմանները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, որոնք համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական կառավարման մարմնի հետ:

2. Նման գործարքների մասին տեղեկություն պարունակող թվային գրառումները պետք է պահպանվեն թվային դրամապանակներում, որոնք կողմերի համար բացվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված կարգով: Կրիպտոակտիվները դրամի կամ այլ արժույթի փոխանակելու գործարքները, պետք է իրականացվեն Կենտրոնական բանկում գրանցված թվային ֆինանսական ակտիվների սակարկության կազմակերպման կանոններին համապատասխան:

3. Թվային դրամապանակը բացում է միայն դրա սեփականատիրոջ նույնականացման ընթացակարգը կատարումից հետո՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

4. Թվային դրամապանակի բացման, թվային գրառումների մասին տեղեկատվության պահպանման, վարման, փակման կարգը, ինչպես նաև թվային թղթապանակների պաշտպանության նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է Կենտրոնական բանկը:

5. Կրիպտոարժույթների օտարումն ու փոխանակումը, որպես հարկման օբյեկտ, դիտարկվում են զույրային իրավունքների իրականացման տեսանկյունից:

#### ***Հոդված 5. Օրենքի ուժի մեջ մտնելը***

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից: